Ազգ
Azg armenian daily
2 ՓԵՏՐՈՒԱՐ 2002 ՇԱԲԱԹ 20 (2465)

## Քոչարյանն ու Ալիեւը կհանդիպեն մարտի 7-ին Աստանայում

ԲԱՔՈՒ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպումը հավանաբար կկայանա մարտի 7-ին, Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում՝ ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթաժողովի ժամանակ: Ադրբեջանական լրատվամիջոցների հաղորդմամբ, ներկայումս, հանդիպման նախաշեմին, հայկական եւ ադրբեջանական կողմերը կոնսուլտացիաներ են վարում դիվանագիտական խողովակներով:

## Ադրբեջան կայցելի Թուրքիայի խորհրդարանի նախագահը

ԲԱՔՈՒ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 7-ին պաշտոնական այցով Բաքու է ժամանելու Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ Օմար Իզգին: Այցի ընթացքում սպասվում է մի շարք փաստաթղթերի ստորագրում միջխորհրդարանական կապերի զարգացման եւ այլ ոլորտներում համագործակցության մասին:

ՈՎ ԻՆՉ ՈՒՆԻ

# Այգիներում պատգամավորները թփեր են հաշվում

### Գույքի եւ եկամուտների հայտարարագրման հետեւանքները

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



Ժողովրդի «իշխանությունն» իրականացնող բոլոր ընտրյալները եւ նրանց կողմից նշանակված չինովնիկական վերնախավի ողջ կորպուսն ստիպված էին ՀՀ պատմության ընթացքում առաջին անգամ հանրությանը հաշվետվություն ներկայացնել՝ որքան կարողություն են դիզել եւ եկամտի ինչ աղբյուրներից: Այս աննախադեպ երեւույթը, որը կարգավորվում է համապատասխան օրենքով, թվում է՝ լուրջ ընդդիմության պիտի արժանանար հենց չինովնիկական վերնախավում, սակայն տարօրինակորեն որեւէ հիստերիա չբարձրացվեց:

ԱԺ պատգամավոր Սեյրան Ավագյանն այս հանգամանքը բացատրում է նրանով, թե «Հայտարարագրման մասին» օրենքը քրեական հետապնդումների եւ կոմպրոմիսներ օգտագործելու հնարավորություն չի ընձեռում որեւէ մեկի: Այդ մտահոգությունը հասկանալի է եւ ԱԺ քննարկումների հիմնական նյութն էր: Այլ խնդիր է, որ մենք բանավիճում էինք՝ ծախսե՞րն էլ հայտարարագրել, թե՞ ոչ: Ճիշտ կլիներ, իհարկե, եթե ծախսերն էլ հայտարարագրվեին: Խնդիրն ավելի պարզ դրված կլիներ եւ հայտարարագրումն էլ ավելի ճիշտ կլիներ»:

Տես ➧ էջ 2

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

## ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի հանդիպումները Մոսկվայում

Ռուսաստանյան Դաշնության նախագահի աշխատակազմի հրավերով հունվարի 30-ից փետրվարի 1-ը աշխատանքային այցով Մոսկվայում էր գտնվում ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը:

ՀՀ եւ ՌԴ նախագահների աշխատակազմերի միջեւ խորհրդակցությունների շրջանակում Արտաշես Թումանյանը հանդիպումներ է ունեցել ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Ալեքսանդր Վոլոշինի, աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Դմիտրի Մեդվեդեւի, աշխատակազմի ղեկավարի տեղակալ, արտաքին քաղաքականության հարցերով վարչության պետ Սերգեյ Պրիխոդկոյի եւ ՌԴ նախագահի գործերի կառավարիչ Վլադիմիր Կոժինի հետ:

Այցելության շրջանակում Արտաշես Թումանյանը հանդիպումներ է ունեցել ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Վլադիմիր Ռուշայլոյի, արտաքին գործերի նախարար Իգոր Իվանովի եւ փոխնախարար Վալերի Լոշչինինի հետ: Բանակցությունների ընթացքում քննարկվել են հայ-ռուսական հարաբերություններին, տարածաշրջանային վերջին զարգացումներին եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ խնդիրներին առնչվող հարցեր:

## «Իտեռան» դեռեւս չի կրճատի Հայաստան առաքվող գազի ծավալը

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստան գազ առաքող «Իտեռա» ընկերության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել գազամատակարարումը նախկին ծավալով՝ մինչեւ առկա խնդիրները լուծում ստանան: «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ից հայտնեցին, որ փետրվարի 1-ի դրությամբ հանրապետություն առաքվող գազի ծավալը դեռեւս մնում է անփոփոխ՝ օրական 5,2 մլն խորանարդ մետր:

Հիշեցնենք, որ որոշ լրատվամիջոցներ, վկայակոչելով «Իտեռա-Հոլդինգի» մամլո ծառայությանը, հաղորդել էին, թե «Իտեռան» մտադիր է փետրվարի 1-ից Հայաստանին մատակարարվող գազի ծավալը կրճատել մինչեւ 1,8 միլիոն խորանարդ մետրի: Ըստ նույն աղբյուրների, ընկերությունը ստիպված էր դիմել այդ միջոցին, քանի որ Հայաստանը մինչ օրս չի մարել 2001 թվականին ստացած գազի դիմաց պարտքը, որը կազմում է ավելի քան 6 միլիոն դոլար, չի վճարել 3,85 միլիոն դոլար ընթացիկ գազամատակարարումների դիմաց եւ զգալիորեն մեծացրել պարտքը ապրանքային մատակարարումներով փոխհաշվարկների գծով: Գազի հայ սպառողների միագումարային պարտքը «Իտեռային» կազմում է 34,6 միլիոն դոլար:

## Անկարան շտկումներ է մտցնում արտաքին քաղաքականության մեջ

ԱՆԿԱՐԱ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը պատրաստել է երկրի արտաքին քաղաքականության մեջ փոփոխությունների իրականացման նախագիծ, ըստ որի նախատեսվում է տնտեսական շահերն այսուհետ որոշիչ գործոն համարել արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում: Արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումներն, ըստ այդմ, կարող են կախում ունենալ տնտեսական նպատակահարմարությունից:

Նախագիծը, թուրքական NTV հեռուստաալիքի հաղորդմամբ, արդեն արժանացել է Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի հավանությանը: Նշված ծրագրի շրջանակներում կազմվել է պետությունների ցանկ, որոնց հետ տնտեսական հարաբերությունների զարգացումը առաջնային կարեւորություն է ստանում: Այս ցանկը գլխավորում է Ռուսաստանի Դաշնությունը: «Անվտանգության ոլորտին առնչվող հարցերում Մոսկվայի հետ հակասությունների առաջացման պարագայում, տնտեսական շահերից ելնելով, անհրաժեշտ է խնդրո առարկա հարցին լուծում տալ: Հեռանկարում հնարավոր է ռուս-թուրքական շահերի խաչաձեւում Կենտրոնական Ասիայում եւ Կովկասյան տարածաշրջանում», նշվում է զեկուցագրում:

## Լրտեսության մեղադրանքով ձերբակալված ՀՀ քաղաքացու մասին

Երեկվա համարում հրապարակել էինք Հայաստանի ազգային անվտանգության նախարարության հաղորդագրությունը՝ հունվարի 26-ին հօգուտ Թուրքիայի լրտեսության մեղադրանքով ձերբակալված Հայաստանի քաղաքացու մասին, մեր կողմից ավելացնելով, որ ձերբակալվածը թուրքագետ եւ թարգմանիչ Մուրադ Բոջոլյանն է:

Բնականաբար, երեկ օրվա ընթացքում շատ էին անձինք, ովքեր հավելյալ տեղեկություններ էին խնդրում ձերբակալության հանգամանքների եւ ենթակայի մասին: Ասենք, որ ձերբակալման հանգամանքների մասին մեր ունեցած տեղեկությունները կցկտուր են, իսկ ենթակայի կենսագրության մասին՝ ոչ ամբողջական: Ըստ մեր ունեցած տեղեկությունների, Մուրադ Բոջոլյանին նշված օրը ձերբակալել են մեր «Ալֆա» ջոկատի անդամները՝ ավտոբուսով Վրաստան անցնելիս, Բագրատաշենի սահմանագլխին եւ անմիջապես տեղափոխել Երեւան՝ ԱԱՆ մեկուսարան: Ըստ հավաստիացումների, նա պատրաստվում էր Վրաստանով անցնել Թուրքիա, որտեղից թուրքական հագուստ էր սովորաբար բերում Երեւանի «Փեթակ» տոնավաճառում վաճառելու: Վերջին 2 տարիներին նա այդ գործով էր զբաղվում:

Այնուհանդերձ, դիվանագիտական եւ լրագրողական շրջանակներին անծանոթ չէ Մ. Բոջոլյանի անունը: Ծնվել է 1950 կամ 1951 թ-ին Թուրքիայում, Սեբաստիա նահանգում: 60-ական թթ. կեսերին Թուրքիայից ընտանիքով ներգաղթել է Հայաստան: Միջնակարգն ավարտել է Լենինականում: 1967 թ. ընդունվել է Երեւանի պետհամալսարան եւ սովորել արեւելագիտության ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Գիտությունների ազգային ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտում: Այնուհետեւ ընդունվել է Մոսկվայի արեւելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան եւ հաջողությամբ պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը՝ Թուրքիայի «Թանզիմաթի» շրջանի պատմության վերաբերյալ: Հեղինակել է մի շարք գիտական աշխատություններ: 1990-ական թթ. սկզբից աշխատանքի է անցել ՀՀ արտաքին գործերի նախարարությունում, մի շրջան վարել է ԱԳՆ Թուրքիայի բաժինը: 1994-95 թթ. թղթակցել է **«Ազգին»**՝ Թուրքիայի մասին գրված հոդվածներով եւ թուրքական մամուլի տեսությամբ, այնուհետեւ աշխատակցել է «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթին, մի կարճ ժամանակ վարել է Հայաստանի ազգային ռադիոյի թուրքերեն հաղորդումների խմբագրությունը: 1995 թ. վերջերից աշխատանքի է ընդունվել ՀՀ նախագահի աշխատակազմում, եղել է առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի անձնական թարգմանիչը, մասնակցել միջպետական բազմաթիվ հանդիպումների: Հայաստանյան պատվիրակությունների հետ բազմիցս այցելել է Թուրքիա, որտեղ մտերմություններ էր ստեղծել թուրք պաշտոնյաների հետ: Հանդիսանում էր թուրքական TV-6 հեռուստակայանի թղթակիցը Հայաստանում: Հատկապես սկզբնական շրջանում եղել է Հայ-թուրքական գործարարների միության աշխատակից, հաճախ ընկերակցել է հանգուցյալ Թելման Տեր-Պետրոսյանին՝ Թուրքիա այցելություններին:

Ինչպես ասվեց, վերջին շրջանում զբաղվում էր ճամպրուկային առեւտրով: Մտերիմների վկայությամբ, նյութական կացությունն ամենեւին բարվոք չէր:

## ԱՄՆ-ի դեսպանը Քոչարյանին հանձնեց Բուշի ուղերձը

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունել է Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Օրդուեյին:

Դեսպանը հանրապետության նախագահին է հանձնել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի ուղերձը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է երկկողմ հարաբերությունների խորացմանն առնչվող հարցերի շրջանակ: Երկուստեք գոհունակություն է հայտնվել հայ-ամերիկյան միջկառավարական տնտեսական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

## ՀՌԱԿ ներկայացուցիչները այցելեցին Շիրակի մարզ

Երեկ Շիրակի մարզ էին այցելել ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամ Գառնիկ Հովակիմյանը, գործիչ Կարեն Կակոյանը: Նպատակն էր հանդիպել մարզի կուսակցական ընկերներին, նոր ակումբներ ձեւավորել, ստեղծվածները նոր անդամներով համալրել: Մեծ Մանթաշ եւ Փոքր Մանթաշ գյուղերում կազմվեցին ՀՌԱԿ սկզբնական բջիջները (հիմնականում մտավորականության ներկայացուցիչներից), իսկ արդեն գործող «Արթիկ» ակումբի նոր անդամները քաղաքի երիտասարդներն էին: Քանի որ մեծ է արթիկցի երիտասարդների հետաքրքրությունը ՀՌԱԿ-ի նկատմամբ, մտադրություն կա քաղաքում ունենալ նաեւ կուսակցության երիտասարդական ակումբ:



Շիրակի մարզում տեղի ունեցած հանդիպումների մասին ավելի մանրամասն՝ **«Ազգի»** երեքշաբթի օրվա համարում: Մ. Հ.

# սկանվորդ



1

Անբախտ Կեկելի անբախտ եղբայրը

Յողը ցցած հատիկ

4

Դասի ավարտի ազդարարը

Գրքի «ավել-ցուկ» էջ

Յոկեյ ձիու վրա նստած

Կատողը «հակառակ» կողմից



2

ԱՄՆ, սպանված պրեզիդենտ

Երաժշտիկ լոմբարդում

Ստորգետնյա ճանապարհ

Մատների բռնած դիրքը

Անառողջություն, վարակ

Կտրուկ հարձակում

Կատեգորիկ ճշմարտություն

Ստույգ քանակաչափ

Բրդյա գլխաշոր

Այտուց

Վաճառողի վերադարձածը

Պատրիոտիա Կաաս, Սելին ...

Գնացք, ուղեւոր, սենյակ

Վահագն Դավթյան, ... Սահյան

Ռազմածովային կամ կովի ...

Բենզերի, մյուսների «հայրը»

Պաշտոնական «կերուխում»

«Ավազահանք» մարմնում

Ամենամեծ աշխարհամասը

Կյանքի տեւողություն

Կանաչապատման «տարր»

Յայկական ազգային զոտեմարտ

3

Գարսեւանի հիվանդ օրգանը

Սիզար Կոլոմբո, ծխամորճ ...

Գործս... միջանցք

«Բաշկիր» մայրաքաղաք

«Ռուսական» ծառ

Ջեկի Չան, Չաք ...

5

Եւ ողորկ, եւ վայելուչ

Կրքոտ երաժշտանքը

Տերյանի օրրանը

Շահուլի, սննդի

Գլխի «շատ աշխույժ քեփ»

Յացի խրխլըրտան կողը

Նվագի արագություն

Մարդը մանուկ հասակում

Մազերի «խուճուճը»

Զարկերակների «շեֆը»

Յավերժ Մասիսի հետ

Երկրի «ռոնակոխ» հատվածը

... ու պատառաց

Յողը հերկելու պարզ գործիք

Արծաթաղույն եղանակ



3

Սեւանում «լողացող» ձուկ

«Ծառայությամբ» դռնապան

«Վերնաշեն», «Անուշ», ...

Արեւելյան ըմբշամարտի տեսակ

«Վարժեցրած մորի»

Էլիզբարովի անունը

Սողեսը Բակունցի մոտ

Գլխի «կմախքը»

Ազարտ մոլություն, էնդիա ...

Սեղանի հայկական խաղ

Քառասնօրյա «դիետա»

Բարձրակետ

Ամբողջի բաղկացուցիչ

Եւ Քոլարյանը, եւ Պուտինը

Ֆիտոլոգ

Մարգերի միջեւ հոսող գետ

Չզորության միավոր

Պճնանության առարկա

«Նաուտիլուսի» «տնօրենը»

Շվեյցարիայի «սիրտը»

Բարձրլեռնային օրինակ

Կրիլայան ժառը

«Սեր բակի» փիլիսոփան

Յամեցեք արտասահման

Միրեցյալը ծոնդղորդաբար

Քիթ ծնեմարդու համար

Ուկրաինական սեյմ

Չվի սպիտակուց + շաքարավազ

Պճնամոլ անգլիացի

Ջուրակի 1-ին լարը

Եվային ծածկող ծառի պտուղը

Տրտմություն

Ռուս զինագործների քաղաքը

1

Ստորքրոյա եւ «վերքոյա» արկ

Լողանտերից զորոտից «քնորդը»

Դաշինք, միանություն

Կարմրուկի նշան

Ավտոտնակ, խաղատեղ

«Տոռավոր» ձի

Նազիր, վեզիր

«Բուրդ մթքրող» գործընթաց

Մարդ, բերան, բուրուն ...

Բալզամը հայերեն

... Նավարացի

Մավր, բաշկինակ

Թափանցիկ շաքար

2

«Անվրդով» դուդուկածայն

Ամերիկյան պերճաշուք մեքենա

«Քթի ... չունենալ»

Կանոնը հաստատող փաստ

Կենդանակերպի «խայթողը»



4

«երկարազուկ» Ենգակ

Ստվերը խուսափողում

Գինու տարազերից կաչվեն

Նախագահական ազդեցիկ «չէ»

... Բրեքստոն



5

Յոսախոսի գիծ

«Արքայական» բաժակ

«Նոր ռուսի» առանձնատուն

Խանգարդի անունը

Միայն մի կողմից «փայլող» կտոր

Լոքի չէ, բայց «ննան է»

Արքի «օգախը»

Սգո ծառը հայերեն

